



Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարության հետ
Ս. Գավթյան



Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առնաթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ
Գ. Բաշատյան
2010թ



ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 10-ՐԴ ԿԵՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն, ավելացված արժեքի հարկով չի հարկվում (հարկման օբյեկտ չի համարվում) բռնագրավման կամ նվիրատվության ձևով գույքի կամ գույքային իրավունքի օտարումը պետությանը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 104.1-րդ հոդվածի համաձայն, համայնքն իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, համայնքն իրավաբանական անձ է, որի առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Համայնքն ինքնուրույն տնօրինում է իր սեփականությունը, ունի բյուջե:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածով պաշտոնապես պարզաբանում եմ.

Համայնքը և պետությունը տարբեր իրավաբանական անձինք են, և համայնքներին նվիրատվության կարգով գույքի կամ գույքային իրավունքի օտարման գործարքների մասով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 10-րդ ենթակետի դրույթները կիրառելի չեն: